

**ԴՈՎԼԱԹԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու  
բարբառ (խոսվածք)**

Ըլել ա, չի ըլել՝ ժամանակով մի սովդաքար, ունեցել ա մի կնիկ, էդ սովդաքարը շատ բան  
ճնանչող մարդ ա ըլել իսանի ճկատից, թե՞ դովլաթավոր ա, թե՞ բեդովլաթ:

Մի առժամանակից եղը կնիկը էրկուֆոքիսանում ա, խտոր ա ընկնում, մի տղա թխա ա  
բերում: Սովդաքարը ուրիշ տեղ ա ըլում, գալիս ա տենում կնիկը խտոր ա ընկե:

— Ա՛յ կնիկ, ի՞նչ ես բերե:

— Տղա եմ բերե:

— Թող մի մտիկ անեմ տենամ դովլաթավո՞ր ա, թե՞ բեդովլաթ:

Կնիկը դանչանք արավ, թե.— Տենալ մի՛, կաց կնքենք, եղնա կտենաս:

Կնիկը թեխին կնքեց առանց մարդին:

Էկավ մարդը տեհավ, որ կնքել են, ասավ.— Բա՛ց ճակատը, տենամ դովլաթավո՞ր ա, թե՞  
բեդովլաթ:

Կնիկը դանչանք արավ.— Ինչ աննամուս մարդ ես, մի առժամանակից եղը թեխեն ոտի կըլի,  
հա՛ կտենուս, հա՛ կտենուս:

Մարդն ասավ.— Ըտուր բանը չի, վա՛յ թե բեդովլաթ ա, մեր էսքան դովլաթը վերջը դա  
կփչացնի. Լավն էն ա, որ տենամ բեդովլաթ ա, սըպանեմ պրծընիք:

Կնիկն ասավ.— Լա՛ վ, թող ոտն ըլի, ընդով տես, թե բեդովլաթ ա՛ սըպանի:

Էկավ թեխեն ոտն էլավ: Հերը տուն էկավ, մտիկ արավ թեխի ճկատին, տեհավ, որ սալամաթ  
բեդովլաթ ա:

Կնկանն ասավ.— Էս թեխեն բեդովլաթ ա, ուզո՞ւմ ես, որ տանեմ սըպանեմ:

Կնիկը դանչանք արավ, թե.— Ա՛յ մարդ, մի՛ սըպանիր, իրան համար կնիկ կուզենք, բալքի  
դովլաթավոր ա, կնկա էրեսեն հաց կուտի:

— Լա՛ վ,— ասավ մարդը,— թո՛ղ կենա:

Տարի էր՝ անց կացավ, տղեն հասավ պսակելու:

Հերը թե.— Բերեք տղին պսակենք:

Կնիկն ասավ.— Էդ քու բանը չե, ես պետք ա տղին պսակեմ:

Մոտիկ մի գեղ կար, մի ախչիկ կար միջումը, կնիկը շատ հավանել էր, մարդիցը թաքուն գնաց  
նշանեց:

Մարդը հարցրուց կնկանը թե.— Նշնե՞լ ես:

Թե.— Հա՛, նշնել եմ:

— Ո՞րդի ա նշնածը, մեր գյուղումն ա, թե՞ ուրիշ տեղ ա:

— Էդ իմ բանն ա, որդի որ ա՛ հարսանիք կանեմ, կբերեմ, կտենաս:

Մարդը գնաց ուրիշ տեղ, կնիկը տղի հըրսանիքը նստացրուց:

Մարդը ընենց վաղի տուն էկավ, որ մարդը<sup>1</sup> նստած հաց ա ուտում:

— Բարի ըրիզո՛ւն ձեզ,— ասավ,— բոլոր ժողովուրդ:

— Աստծու բարին քեզ, աչքդ լիս:

Ասավ.— Աչքս ընդով լիս կըլի, որ թողաք գնամ իմ հարսիս տենամ:

Կնիկն իմացավ, ընդիան աղաքը կաղնեց.— Թող թագը վեր անին, իժու կտենաս:

Թագավերեքը էլավ, ուզեց որ հարսին տենա:

Կնիկը թե.— Չ՛է, թող քառսունք պահի, եղնա կտենաս:

---

1 Այստեղ հարսանքավոր, ժողովուրդ իմաստով—Ծ. Կ.:

— Լա՛վ, կնիկ,— ասավ,— քու ասածն ըլի:

Մարդը գնաց ուրիշ գեղեր ման գալու, միառժամանակից եղը տուն էկավ, տեհավ, որ կնիկը տանը չի, հարսը տունն ավլում ա: Ինքը որ նի մտավ, հարսը գլուխը վի քաշեց, ճակատին մտիկ արավ, տեհավ, որ տղիցը բեղովլաթ ա:

Կնիկը որ տուն էկավ, մարդը ասավ.— Էրկսին էլ դուս գձի իմ տանիցը, էրթան կորչին, էրկուսն էլ բեղովլաթ են:

Կնիկը դանչանք արավ, մարդի ոտներն ընկավ, որ.— Սպասի՛, բեխա կըլի, բալքի նա դովլաթավոր ըլի, նրա էրեսիցը հաց կուտեն:

Մարդը լսեց, ասավ.— Մնա՛, լավ ես ասում:

Մարդը գնացել էր սովորաբարութենի, տարի եղնը էկավ, տեհավ, հարսը խտոր ա ընկել, մի տղա ըրեխա ա բերել:

— Ա՛յ կնիկ,— ասավ,— բեխի ճակատը եղ քաշի, տենամ դովլաթավո՞ր ա, թե՛ բեղովլաթ:

Կնիկը դանչանք արավ, թե.— Ա՛յ մարդ, շատին ես համբերել, քչին էլ համբերի:

Մարդը գնաց ուրիշ գեղերի վրա: Անցավ մի տարի, էկավ տան, տեհավ, որ բեխեն իրանցե բեղովլաթ ա, էն հատաղն էվետ դուս գցեց իրեքին էլ դարտակ, սոված, ծարավ:

Ըտրանք վիկացան, գնա՛ցին, գնա՛ցին մի գեղի կողքով անց կենալիս տեղը մի տավարի փեյին էին դուս տվել, էն փեյինի վրա մի շան թուլա խաղ աներ, սիպտակ թուլա:

Կնիկն ասավ.— Ա՛յ մարդ, էս թուլեն վեր եմ ունում:

Մարդն ասավ.— Ա՛յ կնիկ, ես էլ սոված, դուն էլ սոված, բեխեն էլ ա սոված, էդ անասունն էլ վիր ես անում, սոված ո՛ւր ես տանում:

Կնիկը մտիկ արավ, որ մարդը մտիկ չի անում, գնում ա, թաքուն վի կալավ թուլեն էդիր փեշը:

Գնացին մի քաղաքի դրաղ: Մի տուն բռնեցին, նստեցին մեջը: Թուլեն հանեց փեշիցը:

Մարդն ասավ.— Ա՛յ կնիկ, էդ մեղքին ո՛ւր ես բերել:

Կնիկը թե.— Հայիբս էկավ, բերի, մի թուլա ա, ո՛նց ըլի՛ կըպհենք:

Մարդը թե.— Լա՛վ, բերել ես՝ բերել, կպհենք:

Դու մի ասիլ՝ դովլաթը էդ թուլի ճկատումն ա. էդ դովլաթի խաթեր էդ բազարի մարդկերանց սիրտը ընենց օղորմութին ընկավ, որ էդ մարդին մինը տավար բախշեց, մինը ոչխար բախշեց, մինը մի մադիան բախշեց, վերջը, գլուխդ ինչ ցավացնեմ, սաղ քաղաքը ամենքը մի բան տալով կիսահամբոս էդառ: Ըտուց էլ էդ մարդը շատ լքցվեց, իր հոր ապրուստից էլ շատ ունեցավ:

Դրանից եղը էրկու տղա էրեխա էլ էլավ, էլավ իրեք տղա:

Էդ բանը քաշեց տասներու թ տարի:

Հերը ծնող էր, էլի՛, կնկանն ասավ.— Ա՛յ կնիկ, ըլիլ չի՞, որ գնամ ման գամ, տենամ մեր որդին որդի՞ ա:

Իհարկե, մոր ջիգյարը հոր ջիգյարից դահա ավել էր, ասավ.— Հա՛, ա՛յ մարդ, քաշկա գնաս տեսնես, որ ըտենց բեղովլաթ էին, տենանք սաղ են, թե՛ մեռած, սիրտս թխվել ա:

— Դարդ մի անիլ, ա՛յ կնիկ, ես էս ա կերթամ, քեզ հմար շուտով խաբար կբերեմ:

Մարդը ձին թամբեց, վեր էլավ ու գնաց: Գնաց, մի ձորի միջով գնալիս մտիկ արավ, տեհավ, որ մի սուրու ոչխար բաձում ա:

Չոբանին հարցրուց, թե.— Էս ոչխարն ո՞ւմն ա:

Ասավ.— Տըլան քաղաքի Սովորաբարի տղինն ա:

Դա մտածեց թե. «Էն քաղաքի Սովորաբարը ես եմ, էդ տղեն իմը կըլի, դա բեղովլաթ էր, էսքան ոչխարը դա ո՛րտեղան կուսենա»:

Անցավ, գնաց, շատ սուրուով տավար տեհավ: Տվարածին էլ հարցրուց թե.— Էս տավարն ո՞ւմն ա:

Ասավ.— Էն ֆըլան քաղքի Սովդաքարի տղինն ա: Հարցրուց թե.— Էդ Սովդաքարի տղեն ո՞ր քաղքումն ա:

— Գնա՛,— ասավ,— Էդ աղաքիդ սարը բարձրացի, սարի քամակումը մենձ քաղաք ա, դրա միջումն ա:

Վիկացավ դա ըտիան դենը գնաց, տեհավ մի խելի գումեշ, շատ էլ խոզ տեհավ, շատ էլ մաղիաննի տեհավ, հարցրուց չոբանների մնին, թե.— Էս ճալեննի վեր դովլաթը ո՞ւմն ա:

Ասավ.— Ֆըլան քաղաքի Սովդաքարի տղինն ա:

Դա շատ մտքի եղնա ընկավ, թե.— Փառք քեզ, աստվա՛ծ, դովլաթը ընչի՞ ճկատումն ա, որ էսքան դովլաթը կելե ա դրան, հալբաթ ինձանից եղնը բեխա ա ըլել, նրա ճրկատումն ա: Գնաց րիկունը էդ մարդը քաղաք, տղի տուն: Տեհան թե չէ, էկան փթաթվեցին իրան, տարան տուն: Էդ մարդը նոր էլած էրկու տղի ճակատին մտիկ արավ, տեհավ, որ ընդունք էլ նրանցե բեդովլաթ են: Մնաց, րիկունը տավարը որ էկավ, նրանց ճկատին էլ մտիկ արավ, տեհավ, որ նրանք էլ բեդովլաթ են, ամենից եղը շներն էկան, նրանց ճկատին էլ մտիկ արավ, տեհավ, որ բեդովլաթ են, ամենից եղը մի բոզ շուն էկավ, քաֆթառ, ճկատին մտիկ արավ, տեհավ որ դովլաթը ճկատին:

Ռավոտը սկսեց ըղու ըլիլը, տղեն ասավ թե.— Մամի ջա՛ն, որ ըստիան գնում ես, էս բոլ ապրուստիցը տանում չէ՞ս մորս հմա:

— Ի՞նչ եմ անըմ, որդի,— ասավ,— Էն քու տեհած ապրուստը, ոնց որ տեհել ես, էլ ընենց կենում ա:

— Բա՛, մամի ջա՛ն, մի բան էլ չես ուզո՞ւմ:

— Ա՛յ որդի, քու տեհած շները կտորվել են, ուզում եմ, որ մի շուն տաս տանեմ:

Նոքարնուն ասավ.— Մի լավ շուն բռնեք, տվեք իրան:

Ասավ.— Չէ՛, որդի, ուրիշ շուն չեմ ուզում, էս բոզ շունը թե կտաս՝ կտանեմ:

— Մամի ջա՛ն, էդ բոզ շունը քաֆթառ ա, ընչի՞ դ ա պետքը:

— Է՛ս եմ ուզում, էս տո՛ւ:

Շունը կապեցին, տվին իրան:

Շանը կապած գնալիս տեղը, տվարի միջով անց կենալիս, մի խամածին էրինջ շանը հարու էրետ: Դովլաթը վախեց, շան ճակատիցը դուրս էկավ, մտավ էդ էրինջի ճակատը:

Էն մարդը, որ տեհավ դովլաթը էրինջի ճակատին, շունը վեր էթող, էդ դնաց տղի տունը:

Տղեն ասավ.— Էդ ո՞նց որ էդ էկար, մամի ջա՛ն:

— Ա՛յ որդի,— ասավ,— շունը լավ չէիր կապե, ընդուր ետ էկա:

Տղեն ասավ.— Բան չկա, ռավոտը կկապենք կտանես:

Բիգունը ապրանքը, որ տան էկավ, ասին.— Բերեք մամի հմա մի բան մորթենք:

Ասավ թե.— Ա՛յ որդի, թե մորթում ես, էն էրինջը մորթի: Բերին էն էրինջը մորթեցին:

— Գլուխը,— ասավ հարսին,— խաշ դի՛, էս ու իմ բեխեն գնալ պտինք ժամը, որ գանք խաշն ուտենք:

Հարսը խաշը պատրաստեց, էդիր կրակի վրա, որ էփի, ինքը գնաց ջուրը: Չիմնու պուճուր բեխեն կել էր, ու էրնջի դովլաթը որդի որ ա՛ ընդի պոկել էր ու դրել բերանը՝ կերել: Դովլաթը ընկեք էր էրեխի ճակատը:

Ժամիցը էկան հեր ու տղա, ասավ.— Հարսի՛, խաշը բի ուտենք:

Հարսը գնաց, խաշն էբեր, էդիր մամի աղաքին, մտիկ արավ, տեհավ, որ դովլաթը խաշի ճկատումը չի, ասավ.— Ո՞վ ա պոկե ըստիան:

Թե.— Էրեխեքն են պոկե:

Ապա ասավ.— Կանչի բեխեքին թող գան, մի տենամ:

Կանչեց, մտիկ արավ, տեհավ, որ պուճուր էրեխի ճկատումն ա դովլաթը:

Ասավ.— Ա՛յ որդի, ինձ շունը պետքը չէր, եղբան դովլաթը էդ բոզ շան ճկատումն էր, հարու էրետ էրինջը, դովլաթը փախավ, ընկավ էրինջի ճակատը, էրինջը ընդուր Համար մորթիլ տվի, որ դովլաթը նրա ճակատում էր, հմի էդ պուճուր ըրեխեն, որ ճկատիցը միսը պոկել ա, դովլաթը ընկել ա ըրեխի ճակատը: Ինչքան որ կարաք էդ էրեխին լավ պահպանեք: Ինձ մի բան էլ ա պետքը չի, ես չալիշ գեի, թե տենամ հլա դովլաթը քու օջախիցը դուս ա ըլում, թե՛ չէ: